



# Մ ՈՒՐԲ Յ ԱԿՈՐ

## ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ ՄԱՅՐ Ե ԿԵՂԵՅԻ



### ԱՆԱՌԱԿԻ ԿԻՐԱԿԻ

08 ՄԱՐՏ 2009

Կիրակնօրեայ ընթերցումներ	Էջ 1
Ոսոնահետևներ	Էջ 4
Երազ մը ունեցի՞ր	Էջ 5
Ծանուցում	Էջ 7

### ԸՆԹԵՐՑՈՒՄ ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԷԻ ԳԻՐԳԷՆ (54.11-55.13)

Տէրը այսպէս կ'ըսէ.

«Ո՛վ Երուսաղէմ, փոթորիկէն զարնուած անմխիթար տառապեալ, հաշտութիւն պիտի ընեմ հետդ, որպէսզի մխիթարուիս. ահա ես քու հիմերդ շափիւղայ քարերով պիտի դնեմ, պատկերդ՝ կարկեհան քարերով, աշտարակներդ կարմիր յակինթներով պիտի կանգնեմ, դռներդ՝ բիւրեղէ, եւ շուրջդ պարիսպ պիտի քաշեմ ընտիր եւ թանկագին քարերով: Բոլոր որդիներդ Աստուծո՛վ ուսած պիտի ըլլան, զաւակներդ մնայուն խաղաղութիւն պիտի վայելեն, եւ դուն արդարութեան մէջ պիտի հաստատուիս: Ա՛լ բռնութեան վախը պիտի չունենաս, արհաւիրքը քեզի պիտի չմօտենայ: Քեզի եկողները պիտի ըլլան միայն անոնք՝ որոնք ինձմով դարձի կու գան. իրենց երկիրները ձգելով պիտի գան քու կողքիդ բնակին, քեզ իրենց ապաստանը դարձնելով: Ահա ես ինքս քեզ հաստատեցի. դարբինը իր փքոցով կրակը կ'արծարծէ եւ կը շինէ գործիքներ՝ որոնք գործածութեամբ կը մաշին ու կը փճանան. սակայն ես քեզ հաստատեցի որ միշտ մնաս: Որեւէ զէնք պիտի չյաջողի քեզի վնասել, որեւէ լեզու որ կը փորձէ քեզ դատապարտել՝ պարտութեան պիտի

մատնես, եւ քեզ ամբաստանողները իրենք պիտի դատապարտուին: Տիրոջ ծառայողներուն ժառանգութիւնը ա՛յս է. ե՛ս է որ զանոնք կ'արդարացնեմ, - կ'ըսէ Տէրը: Դուք որ ծարաւի էք՝ ջուրին եկէք, եւ դուք որ դրամ չունիք՝ եկէք գինի ու կաթ առէք առանց դրամի, առանց գին վճարելու: Ինչո՞ւ ձեր վաստակը կու տաք այնպիս բաներու որոնք չեն կշտացներ: Ինձի մտիկ ըրէք եւ բարիք պիտի վայելէք, բարիքներով պիտի կշտանաք: Ականջ տուէք խօսքերուս եւ պատուէրներուս հետեւեցէք: Եթէ մտիկ ընէք ինձի, բարիքներու մէջ պիտի ապրիք, ձեզի հետ յաւիտենական ուխտ մը պիտի կնքեմ, եւ ձեզի պիտի տամ այն իսկական օրհնութիւնը զոր Դաւիթի խոստացայ: Ես զինք հեթանոսներուն վկայ եւ ազգերուն իշխան ու հրամանատար կարգեցի: Քեզ չգիտցող ազգեր քեզի պիտի դիմեն, քեզ չճանչցող ժողովուրդներ քեզի պիտի ապաւինին քու Տէր Աստուծոյդ՝ Իսրայէլի Սուրբին համար, որ քեզ փառաւորեց»:

Փնտռեցէք Տէրը, որքան ատեն որ կրնաք զինք գտնել. կանչեցէք զայն, որքան ատեն որ կրնաք զինք գրտնել. կանչեցէք զայն, որքան ատեն որ մօտիկ է: Ամբարիշտը իր չար ճամբաներէն եւ անօրէնը իր չար

Ականջ տուէ՛ք խօսքերուս եւ պատուէրներուս հետեւեցէ՛ք:

«Իմ խորհուրդներս ձեր խորհուրդներուն պէս չեն, իմ նամբաներս ձեր նամբաներուն չեն նմանիր...»:

խորհուրդներէն թող հրաժարի եւ Տիրոջ դառնայ, եւ Տէրը պիտի ողորմի անոր. թող մեր Աստուծոյն դառնայ, որ կը ներէ նոյնիսկ եթէ բազմապատիկ ըլլան ձեր մեղքերը: «Որովհետեւ,

«իմ բերնէս ելած խօսքը անարդիւն ինծի պիտի չդառնայ, մինչեւ իմ կամքս կատարէ եւ նպատակներս յաջողցընէ:»

իմ խորհուրդներս ձեր խորհուրդներուն պէս չեն, իմ ճամբաներս ձեր ճամբաներուն չեն նմանիր,- կ'ըսէ Տէրը: Այլ, որքան երկինքը երկրէն բարձր է՝ այնքան բարձր են իմ ճամբաներս ձեր ճամբաներէն, եւ իմ խորհուրդներս՝ ձեր

խորհուրդներէն: Ինչպէս անձրեւն ու ձիւնը երկինքէն կ'իջնեն եւ երկինք չեն բարձրանար կրկին մինչեւ երկիրը չոռոգեն, զայն չարգասաւորեն ու չպղտորեն, եւ սերմանողին սերմ եւ ուտելիք հաց չտան, այնպէս ալ իմ բերնէս ելած խօսքը անարդիւն ինծի պիտի չդառնայ, մինչեւ իմ կամքս կատարէ եւ նպատակներս յաջողցընէ: Այո, ուրախութեամբ դուրս պիտի գաք ձեր գերութենէն եւ խաղաղութեամբ պիտի առաջնորդուիք. լեռներն ու բլուրները պիտի խայտան եւ ցնծութեամբ ընդունին ձեզ, եւ դաշտի բոլոր ծառերը իրենց ճիւղերով ծափ պիտի գարնեն: Յրդենիին տեղ նոճի եւ դժնիկին փոխարէն մրտենի պիտի բուսնի. եւ ասիկա Տիրոջ անունին համար անջնջելի, յաւիտենական նշան մը պիտի ըլլայ»:

**ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ  
ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐՈՒՆ  
ԳՐԱԾ ՆԱՄԱԿԷՆ  
(6.1-7.1)**

Արդ, որովհետեւ Աստուծոյ գործակիցներն ենք, կ'աղաչենք ձեզի, մի՛ վատնէք Աստուծոյն ձեր ստացած շնորհքը: Որովհետեւ Աստուծոյն կ'ըսէ.  
«Երբ յարմար ժամանակը եկաւ՝ լսեցի

քեզ, երբ փրկութեան օրը հասաւ՝ օգնեցի քեզի»: Ահա հիմա՛ է այդ յարմար ժամանակը. հիմա է փրկութեան օրը:

Ահա հիմա՛ է այդ յարմար ժամանակը. հիմա է փրկութեան օրը:

Ոեւէ բանով պատճառ մի՛ ըլլաք որ Աստուծոյ գործը խափանուի կամ վարկաբեկուի. այլ բոլոր պարագաներուն ալ դուք ձեզ ցոյց տուէք որպէս Աստուծոյ պաշտօնեաներ, մեծ համբերութեամբ յանձն առնելով նեղութիւնը, վիշտը, չարչարանքը, ծեծը, բանտը, խռովարարներու յարձակումները, յոգնութիւնը, անքնութիւնը, անօթութիւնը: Այս բոլորը տարէք մաքուր սիրտով, գիտակցօրէն, համբերատարութեամբ, քաղցրութեամբ, Սուրբ Հոգիով, անկեղծ սիրով, ճշմարտութիւնը քարոզելով, Աստուծոյ գօրութեամբ եւ արդարութեամբ գինուած՝ չարին դէմ յարձակելու եւ ինքզինք պաշտպանելու համար: Մի՛ այլայլիք ո՛չ փառքէն եւ ո՛չ անարգանքէն,

Մի՛ այլայլիք ո՛չ փառքէն եւ ո՛չ անարգանքէն, ո՛չ գովասանքէն եւ ո՛չ մեղադրանքէն:

Մարդիկ մոլորած թող ըսեն մեզի. մենք գիտենք թէ ճշմարտութենէն չենք շեղած: Թող չուզեն մեզ ճանչնալ. մենք գիտենք թէ մեզ լա՛ւ կը ճանչնան: Թող մեռած սեպեն մեզ. մենք գիտենք թէ կենդանի ենք: Թող մեզ պատժապարտ համարեն. մենք գիտենք թէ մահուան դատապարտութենէն ազատած ենք: Թող մեր կեանքը տխուր կարծեն. մենք միշտ ուրախ ենք: Աղքատ թող սեպեն. մենք ուրիշներու կեանքերը կը ճոխացնենք: Այո՛, կը թուի թէ ոչի՛նչ ունինք, մինչ ամէն ինչ ունինք:

Ահա, սիրելի՛ Կորնթացիներ, ամէն ինչ բաց եւ անկեղծ սիրտով ըսի

ձեզի: Դուք ինչո՞ւ կը դժուարանաք արտայայտուելու: Ո՛չ իմ պատճառովս հարկաւ, այս պարզապէս՝ ձեր սէրը ինծի արտայայտելու կը քաշուիք: Բայց կ'ուզեմ որ ինծի պէս բանաք ձեր սիրտերը եւ ազատօրէն խօսիք դուք ալ. չէ՞ որ իմ զաւակներս էք դուք:

Բնա՛ւ, անհաւատներուն գործակից մի՛ ըլլաք: Ի՞նչ կապ կրնայ ունենալ արդարը անօրէնին հետ, կամ ի՞նչ նոյնութեան եզր կրնայ ըլլալ լոյսին եւ խաւարին միջեւ: Ի՞նչ համաձայնութիւն կրնայ ըլլալ Քրիստոսի եւ սատանային միջեւ, կամ ի՞նչ գործ ունի հաւատացեալը անհաւատին հետ: Ի՞նչ նմանութիւն կայ Աստուծոյ տաճարին եւ մեհակներուն միջեւ:

Արդարեւ մե՛նք ենք կենդանի Աստուծոյ տաճարը, ինչպէս Աստուած ինք ըսաւ.

«Անոնց մէջ պիտի բնակիմ եւ անոնց հետ պիտի ապրիմ: Ես իրեանց Աստուածը պիտի ըլլամ եւ անոնք իմ ժողովուրդս»:

«Անոնց մէջ պիտի բնակիմ եւ անոնց հետ պիտի ապրիմ: Ես իրեանց Աստուածը պիտի ըլլամ եւ անոնք իմ ժողովուրդս»:

Ահա՛ թէ ինչո՞ւ Աստուած կը հրահանգէ մեզի.

«Անջատ եւ հեռու կեցէք հեթանոսներէն. պիղծ բաներու մի՛ դպչիք, եւ ես ձեզ պիտի ընդունիմ: Ես ձեզի հայր պիտի ըլլամ եւ դուք իմ տղաքս ու աղջիկներս պիտի ըլլայ,- կ'ըսէ Ամենակալ Տէրը»:

հեռու մնանք մարմնական եւ հոգեկան ամէն պղծութենէ, մեզ մեզ կատարելապէս մաքրենք՝ Աստուծոյ երկիւղովը ապրելով:

Սիրելիներ, այս խոստումները մեզի՛ եղած են: Ուստի հեռու մնանք մարմնական եւ հոգեկան ամէն պղծութենէ, մենք մեզ կատարելապէս մաքրենք՝ Աստուծոյ երկիւղովը ապրելով:

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ (15.1-32)

Մաքսաւորներ եւ մեղաւորներ Յիսուսի կողմ դալին՝ զինք լսելու համար: Փարիսեցիներն ու օրէնքի ուսուցիչները սկսան տրտնջալ, ըսելով. «Ինչպէ՞ս կ'ըլլայ որ այս մարդը մեղաւորները կ'ընդունի եւ անոնց հետ կը ճաշէ»:

Յիսուս հետեւեալ առակները պատմեց անոնց.-

«Ենթադրենք որ ձեզմէ մէկը հարիւր ոչխար ունի: Երբ անոնցմէ մէկը կորսնցնէ, չի՞ ձգեր իննսունինը արօտավայրին մէջ եւ չ'երթա՞ր կորսուածին ետեւէն, մինչեւ որ գտնէ զայն: Եւ երբ գտնէ, ուրախութեամբ իր ուսերուն վրայ կը դնէ եւ տուն կը դառնայ, կը կանչէ իր բարեկամներն ու զբարեցիները եւ կ'ըսէ անոնց. «Ուրախացէ՛ք ինծի հետ, որովհետեւ կորսուած ոչխարս գտայ»: Կ'ըսեմ ձեզի, երկինքի մէջ նոյնպէս ուրախութիւն պիտի ըլլայ մէկ ապաշխարող մեղաւորի համար, քան իննսունինը արդարներու համար, որոնք ապաշխարութեան պէտք չունին»:

«Ուրախացէ՛ք ինծի հետ, որովհետեւ կորսուած ոչխարս գտայ»

«Կամ ենթադրենք թէ կին մը տասը արծաթ դահեկան ունի: Երբ անոնցմէ մէկը կորսնցնէ, ճրագը չի՞ վառեր եւ տունը ու շաղթ ու թեամբ չ'ա՞ւլեր, մինչեւ որ դահեկանը գտնէ: Եւ երբ գտնէ, կը կանչէ իր բարեկամ ու հիններն ու զբարեցիները եւ կ'ըսէ անոնց. «Ուրախացէ՛ք ինծի հետ, որովհետեւ կորսնցուցած դահեկանս գտայ»: Կ'ըսեմ ձեզի, Աստուծոյ հրեշտակները նոյն ձեւով պիտի ուրախանան մեղաւորի մը համար, որ կ'ապաշխարէ»:

«Աստուծոյ հրեշտակները նոյն ձեւով պիտի ուրախանան մեղաւորի մը համար, որ կ'ապաշխարէ»:

Ապա շարունակեց.-

«Մարդ մը երկու գաւակ ունէր: Կրտսերը հօրը ըսաւ. “Հա՛յր, քու ստացուածքէդ ինծի ինկող բաժինը հիմա տուր ինծի”: Եւ հայրը իր գաւակներուն միջեւ բաժնեց իր ունեցածը: Քանի մը օր ետք կրտսեր գաւակը առաւ իր ամբողջ հարստութիւնը եւ հեռու երկիր մը գնաց: Հոն անառակ կեանք մը ապրելով մսխեց հարստութիւնը եւ սպառեց իր ամբողջ ունեցածը:

«Պատահեցաւ որ այդ երկրին մէջ մեծ սով մը տիրեց, երբ արդէն ինք սկսած էր աղքատանալ: Ուստի գնաց այդ երկրի քաղաքացիներէն մէկուն քով ծառայ եղաւ, եւ անիկա իր ազարակը ղրկեց զինք՝ խոզեր արածելու համար: Նոյնիսկ պատրաստ էր խոզերուն կերած եղջիւրներով իր փորը լեցնելու, սակայն ոչ ոք կու տար իրեն: Երբ անդրադարձաւ իր վիճակին, ինքնիրեն ըսաւ. “Հօրս տան մէջ քանի՛ գործաւորներ կան, որոնք իրենց պէտք եղած կերակուրէն աւելին ունին, մինչ ես հոս անօթութենէ կը մեռնիմ: Ելլեմ երթամ հօրս քով եւ ըսեմ իրեն.– Հա՛յր, մեղանչեցի Աստուծոյ եւ քեզի դէմ. այլեւս արժանի չեմ քու որդիդ կոչուելու. զիս նկատէ քու գործաւորներէդ մէկը”։ Ապա ելաւ եւ հօրը քով գնաց: Տակաւին տունէն բաւական հեռու էր, երբ հայրը տեսաւ զինք ու գլխաց. վազելով դիմաւորեց զայն, վզին փաթթուեցաւ եւ համբուրեց: Որդին Հօրը ըսաւ. “Հա՛յր, մեղանչեցի Աստուծոյ եւ քեզի դէմ. այլեւս արժանի չեմ քու որդիդ կոչուելու”։ Հայրը իր ծառաներուն հրամայեց. “Անմիջապէս բերէք լաւագոյն պատմուճանը եւ հագցուցէք իրեն. մատանի անցուցէք իր մատին եւ կօշիկ տուէք իրեն: Բերէք պարարտ հորթը, մորթեցէք, ուտենք եւ ուրախանանք: Որովհետեւ իմ այս գաւակս մեռած էր՝ ողջնցաւ, կորսուած էր՝ գտնուեցաւ”։ Եւ սկսան խրախճանքի:

«Մինչ այդ, երէց գաւակը ազարակ կը գտնուէր: Վերադարձին, երբ տան մօտեցաւ՝ երգի ու պարի ձայներ լսեց: Կանչեց ծառաներէն մէկը եւ հարցուց

թէ ի՛նչ կայ: Ծառան ըսաւ իրեն. “Եղբայրդ եկաւ. եւ որովհետեւ ողջ-առողջ վերադարձաւ, հայրդ պարարտ հորթը մորթեց”։ Երէց գաւակը զայրացաւ եւ չուզեց ներս մտնել: Այս մասին իմանալով, հայրը դուրս ելաւ եւ աղաչեց որ ներս մտնէ: Իսկ ան պատասխանեց. “Տարիներէ ի վեր քեզի կը ծառայեմ. ոեւէ մէկ հրահանգդ չանտեսեցի, եւ սակայն նոյնիսկ ուլ մը չտուիր ինծի, որ ուրախանայի բարեկամներու հետ: Մինչդեռ, երբ քու այդ որդիդ եկաւ, որ քու ստացուածքդ պոռնիկներուն հետ մսխեց, պարարտ հորթը մորթեցիր անոր համար”։ Հայրը ըսաւ. “Տղա՛ս, դուն միշտ ինծի հետ ես եւ ամբողջ ունեցածս քուկդ է: Սակայն հիմա պէտք է ուրախանանք եւ ցնծանք, որովհետեւ այս եղբայրդ մեռած էր՝ ողջնցաւ, կորսուած էր՝ գտնուեցաւ”»:

«Իմա պէտք է ուրախանանք եւ ցնծանք, որովհետեւ այս եղբայրդ մեռած էր՝ ողջնցաւ, կորսուած էր՝ գտնուեցաւ»:

## ՈՏՆԱՀԵՏՔԵՐ

ՀԵՐԵԱԿ՝ ԱՇՈՒՅԹ  
ԱՉԱՏ ԽԱՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ՝ ԿԱՐՕ ՆՈՒՆԵՏԱՆ

- Գիշերով երազ տեսայ:
- Ծովեզերքը, Տիրոջս հետ կը քալէի:
- Մութ երկնքին՝
- Կեանքէս տեսարաններ փայլատակեցին:
- Իւրաքանչիւր տեսարանի ընկերացող
- Երկու զոյգ ոտնահետքեր նկատեցի
- Աւազին վրայ.
- Մէկ զոյգը իմս էր, միւսը՝ Տիրոջս:
- Երբ աչքիս առջեւ
- վերջին տեսարանը պարզուեցաւ,
- Յետադարձ ակնարկով նայեցայ
- Աւազին վրայի ոտնահետքերուն.
- Միայն զոյգ մը մնացած էր:



**ԵՐԱԶ ՄԸ ՈՒՆԵՑԻՐ**

**ԳՐԻԳՈՐ Ծ. ՎՐԴ. ՉԻՖԹՃԵԱՆ**

Երազներու ինչ ըլլալուն, կամ անոնց մեկնութեան հետ առնչութիւն ունեցող գրութիւն մը չէ այս յօդուածը: Ո՛չ ալ երազահան հաստափոր գիրքի մը պատրաստութեան նախընթաց աշխատանք մըն է ասիկա: Խորագիրը ինքնին որոշ չափով կը մեկնէ գրութեան իմաստը, եթէ ընթերցողը վարժ է պատկերաւոր բացատրութեանց: «Երազ մը ունեցի՛ր» բարեկամական խօսքը, կը թելադրէ ունկնդիրին, իր կեանքը դարձնել հեռանկարի մը սլաքուած եւ յստակ ուղղութեամբ ընթացող կեանքի: Մէկ խօսքով, «երազ մը ունեցի՛ր» կը նշանակէ թէ՛ մեր կեանքը նպատակակէտ պէտք է ունենայ եւ հասնի իր կատարումին:

Անդրադարձայ որ այդ  
 կեանքիս ամենաստորին  
 եւ ամենատխուր պահուն էր:  
 Այս երեւոյթը անհանգստացուց զիս  
 եւ խռովահար՝ Տիրոջ հարց տուի:

«Տէր, երբ Քեզի հետեւիլ որոշեցի,  
 Հետս մինչեւ վերջ պիտի քալես  
 եւ խօսիս, ըսիր:  
 Բայց հիմա կը գիտակցիմ  
 Որ կեանքիս ամենէն խառնաշփոթ ժամուն  
 Ոտնահետքերու միայն մէկ զոյգ կը  
 տեսնուի:  
 Չեմ հասկնար,  
 Երբ Քեզի առաւելագոյնս կը կարօտիմ,  
 կը լքե՞ս զիս:»

Ան շշնջաց.  
 «Թանկագին գաւակս,  
 Քեզ կը սիրեմ,  
 Քեզ երբեք պիտի չլքեմ՝  
 Մանաւանդ փորձութեանդ ժամանակ:  
 Երբ միայն մէկ զոյգ ոտնահետքեր տեսնես,  
 Գիտցիր՝  
 Նիշդ այն ատեն է որ գրկած եմ քեզ:»

Առաջին իսկ առիթով, առարկողներ կրնան ըլլալ, ըսելով թէ կեանքը կարելի չէ հիմնել երազի վրայ, որովհետեւ երազը աննիւթեղէն գոյութիւն մը ունենալով, կամ պարզապէս մտքի պաստառին վրայ երեւցած պատկերներու հատուկտոր յարակցում մը ըլլալով, հիմնաւոր արժատ մը չունի: Հետեւաբար կարելի չէ նման երեւոյթի մը վրայ հիմնել ամբողջ կեանք մը: Սակայն, նախ պէտք է սահմանել «երազ» բառին իմաստը, եւ այս գրութեան պատշաճող անոր հասկացողութեամբ մօտենալ հարցին:

«Երազ» բառը, միայն գիշեր ատեն տեսնուած պատկերներու կամ երբեմն շատ երկար թուացող անըջային շարժանկարի մը իմաստը չունի: Ո՛չ ալ զայն պէտք է միայն շփոթել «տեսիլք» բառին հետ, որ՝ ո՛չ քուն եւ ո՛չ արթուն պահուած մէջ եղած յայտնութիւն մըն է, երբեմն երկնային, երբեմն ներքին՝ հոգեկան: Այս վերջինը նախազգացումի եւ իրականութեան միջեւ կը դնեն ոմանք, եւ չափազանցօրէն լրջութեամբ մօտենալով իրենց զգացումներուն, ըստ այնմ կը տնօրինեն իրենց կեանքին դիմաց բացուող յաջորդող հանգրուանը:

Խօսակցական մեր լեզուին մէջ գործածուող «երա՞զ կը տեսնես», «մի՛ երագեր», «երազային աշխարհի մէջ է», եւ նման արտայայտութիւններ, առհասարակ ցոյց կու տան մեր կասկածը այն անձերուն նկատմամբ, որոնք երբեմն յանդուգն որոշումներ ունենալով, զանոնք

գործադրելու համար ճամբայ կ'իյնան: Երբեմն արկածախնդիրներ են անոնք, եւ կրնայ նաեւ պատահիլ որ յաջողին իրենց կեանքին մէջ: Անոնք երբեմն «խենթեր» կը նկատուին, սակայն գիտակից իրենց ուղղութեան, եւ մանաւանդ անքակտելիօրէն փարած իրենց վախճանական նպատակին:

Իսկ՝ «տեսիլք ունեցած է», «յաճախ տեսիլքներ կ'ունենայ», «տեսիլքներով կը յայտնուի անոր» արտայայտութիւնները ընդհանրապէս դրական իմաստով կը գործածուին, աստուածավախ մարդոց համար, որոնք աղօթքի կեանքին նուիրուած են կանուխէն: Սրբակենցաղ անձերու համար գործածուող այս «տեսիլք ունենալ»-ու երեւոյթը, պէտք է զգուշութեամբ գործածել անշուշտ, չ'իյնալու համար Արեւմտեան կրօնական շարժումներու ազդեցութիւնը կրող կամայական տեսիլքներ ունեցողներու եւ ապսպրուած «երկնային յայտնութիւններ» ունեցող բախտախնդիրներու որջերը:

Հայ ժողովուրդի պատմութեան մէկ կարեւոր հանգրուանին, երբ մեր ազգը ամբողջ քրիստոնէութեան լոյսով պայծառակերպուեցաւ, Ազաթանգեղոս պատմիչ կը յիշէ տեսիլք մը, զոր Հայոց Լուսաւորիչը՝ Սուրբ Գրիգոր ունեցաւ: Ատիկա քրիստոնէութեան հիմնադրումն ու արմատաւորումն էր Հայաստան աշխարհի մէջ, Միածնին երկիր էջքով եւ հայկական առաջին եկեղեցւոյ հիմնադրումով: Այնպէս ինչպէս պատմիչը կը յիշէ, Սուրբ Գրիգորի տեսածը «ոչ ի քուն երազ էր, եւ ոչ յարթութեան տեսիլ»:

Հին Կտակարանին մէջ եւս կը հանդիպինք տեսիլքներ ունեցող կամ աստուածային յայտնութիւններու զգացողութեամբ օժտուած անձերու: Ծննդոց Գիրքին մէջ կը հանդիպինք Եգիպտոսի փարաւոնին անմիջական օգնականներուն՝ անոր մատուակին եւ հացթուխին, բանտին մէջ տեսած զոյգ երազներուն, որոնք իրականութիւն կը դառնան Յովսէփի կողմէ մեկնուելէ ետք: Աւելի ուշ փարաւոնին երրեակ անգամ տեսած երազը կը մեկնուի Յովսէփի կողմէ, որ դարձեալ իր կատարումը կը գտնէ, այնպէս ինչպէս յայտնուած էր Յովսէփին, երկնային միջամտութեամբ:

Պատմական աւելի ուշ ժամանակներ երթալով, կը տեսնենք, որ Եսթեր թագուհին, իր ժողովուրդին մասին աստուածային յայտնութեամբ երազ մը տեսած ըլլալով, կը ներկայանայ թագաւորին, ու զայն իբրեւ երկնային որոշում կը յայտնէ անոր:

Մեր մանկութեան օրերուն հանդիպած

ենք հաւատքի խորք ու համոզում ունեցող իսկական բարեպաշտ անձերու, որոնք իրենց կատարելիք իւրաքանչիւր կարեւոր գործի նախօրեակին, Աստուծմէ առաջնորդութիւն կը խնդրէին աղօթքով: Իրենց խնդրանքներուն պատասխանները անոնք կ'ըսէին, թէ կը ստանան տեսիլքներով ու յայտնութիւններով:

Այս բոլոր երկնային յայտնութիւնները ու սրբակենցաղ անձերու կողմէ տրուած վկայութիւնները իրենց կարգին, կարեւոր են հաւատքի փորձառութեան իմաստով: Սակայն, հաւատքի մեր կեանքը, եւ այն միջավայրը որուն մէջ կ'ապրինք հողեղէն մեր գոյութեան ժամանակամիջոցին, յստակ ուղղութեան կարիքը ունի: Նպատակակէտ մը պէտք է սպասէ իւրաքանչիւր անձի: Հեռանկար մը պէտք է ունենայ ամէն մարդ, ու այդ ուղղութեամբ պատրաստէ ինքզինք այս կեանքին մէջ:

Համալսարանական ուսման պարագային, կրթական բարձրագոյն այդ օճախները, արեւելումի յատուկ բաժանմունք կ'ունենան, տակաւին կեանքին նոր բացուող երիտասարդին ուղղութիւն տալու համար: Կեանքի համալսարանը եւս նոյն պայմանները ունի: Սակայն մէկ տարբերութեամբ, որ հոն հազուադէպ են արեւելումի օգնութիւն ցուցաբերող անձերը: Ընդհակառակը, երբեմն մեր դիմաց կրնան ելլել մեզ շփոթութեան մատնող անհատներ, որոնք կրնան դիտումնաւոր կամ անգիտակից կերպով շեղել մեր կեանքին ընթացքը ու աղէտալի հետեւանքներու առաջնորդել մեր անմեղ կեանքը:

Առ այդ, արթնութիւնը եւ շրջահայեցողութիւնը ամէնէն կարեւոր երկու ազդակներն են, որոնք կը պաշտպանեն մեզ նման մարդորսներէ: Այդ արթնութեամբ ու շրջահայեցողութեամբ մենք կրնանք երազ մը ընտրել մեր կեանքին համար: Այդ երազը եթէ բարի է, եթէ օգտակէտ է մեզի եւ մեր շրջապատին համար, անպայման որ երկնային միջամտութեամբ պիտի «մեկնուի», դէպի իրականացում ընթանայ, պայմանաւ որ նախ մենք հաւատանք անոր: Կեանքի երազ մը, հեռակայ հսկայ աշխատանք մը կէսով չափ կատարուած պէտք է համարել, երբ կայ զայն կատարելու լծուած հաւատաւոր կամաւոր մը, որ զայն որդեգրած ու իւրացուցած է:

Երազ մը ունեցի՛ր, այո՛, սակայն ընտրա՛ծ իսկ պահու՛ղ հաւատա՛ անոր կատարման, վստահ ըլլալով որ աշխատանքային կերպերու եւ միջոցներու մասին երկնային առաջնորդութիւնը պիտի չուշանայ քեզի...:

## ԵՐԵՄՆՈՐԵԱԿ

Երեբժարթ, 10 Մարտ 2009

19.00 «Տա Վինչի Գոտ» քննարկում»

Երիտասարդական ներկայացում/զրոյց

Չորեքշաբթի, 11 Մարտ 2009

Մեծ Պաշտի ԺԷ. օր

19.00 Հսկումի ժամերգութիւն  
Խորհրդածութիւն՝ Ճաշակենք  
«Հաւատով Խոստովանիմ»ը Գ.

Հրագրարթ, 12 Մարտ 2009

Մեծ Պաշտի ԺԸ. օր

11.00 Արեւազալի ժամերգութիւն  
Խորհրդածութիւն՝  
«Խոնարհութիւն»ը

Կրոնար, 15 Մարտ 2009

ՏԱՏԱՐ ԿՐՈՆԱՐ

09.30 Ժամերգութիւն

11.00 Ս. Պատարագ

Չորեքշաբթի, 18 Մարտ 2009

ՄԻՅՈՒՆԵ

19.00 Հսկումի ժամերգութիւն  
Խորհրդածութիւն՝ Ճաշակենք  
«Հաւատով Խոստովանիմ»ը Դ.

Հրագրարթ, 19 Մարտ 2009

Մեծ Պաշտի ԻԵ. օր

11.00 Արեւազալի ժամերգութիւն  
Խորհրդածութիւն՝  
«Աշխատասիրութիւն»ը

Կրոնար, 22 Մարտ 2009

ԴԱՏԱՌԻ ԿՐՈՆԱՐ

09.30 Ժամերգութիւն

11.00 Ս. Պատարագ

Երեբժարթ, 24 Մարտ 2009

20.00 «Զեկոյց՝ Ազգային Ընդհանուր  
Ժողովի մասին»

Չորեքշաբթի, 25 Մարտ 2009

Մեծ Պաշտի ԼԱ. օր

19.00 Հսկումի ժամերգութիւն  
Խորհրդածութիւն՝ Ճաշակենք  
«Հաւատով Խոստովանիմ»ը Ե.

Հրագրարթ, 26 Մարտ 2009

Մեծ Պաշտի ԼԲ. օր

11.00 Արեւազալի ժամերգութիւն  
Խորհրդածութիւն՝  
«Հեղութիւն»ը

Կրոնար, 29 Մարտ 2009

ԳԱՍՏԵԱՆ ԿՐՈՆԱՐ

09.30 Ժամերգութիւն

11.00 Ս. Պատարագ

Չորեքշաբթի, 01 Ապրիլ 2009

Մեծ Պաշտի ԼԸ. օր

19.00 Հսկումի ժամերգութիւն  
Խորհրդածութիւն՝ Ճաշակենք  
«Հաւատով Խոստովանիմ»ը Զ.

Հրագրարթ, 02 Ապրիլ 2009

Մեծ Պաշտի ԼԹ. օր

11.00 Արեւազալի ժամերգութիւն  
Խորհրդածութիւն՝  
«Ողջախոհութիւն»ը

Հարաթ, 04 Ապրիլ 2009

ԾԱՊԱՆՁԱՐԻ ԱՆԽՈՐԵԱԿ

16.00 Ընտանեկան հաւաքոյթ

Կրոնար, 05 Ապրիլ 2009

ԾԱՊԱՆՁԱՐԻ

09.30 Ժամերգութիւն

11.00 Ս. Պատարագ

## ՀԱԿՈՒՄԻ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՄ

ՃԱՇԱԿԵՆՔ «ՀԱԽՏՈՎ

ԽՈՍՏՈՎԱՆԻՄ»ը

9-12 ՀԱՄԱՐԱՆԻ՝ ԿՐ ԽՈՐՀՐԴԱԾԷ

ՊՐԱ. ԹՈՐՈՍ

ՊԱՊԻԿԵԱՆ

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, 11 ՄԱՐՏ 2009

ԵՐԵԿՈՂԵԱՆ ԺԱՐ 7.00-ԻՆ

## ԱՐԵՎԱԶԱԼԻ

ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՄ

«ԽՈՆԱՐՀՈՒԹԻՒՄ»ը՝

ԿՐ ԽՈՐՀՐԴԱԾԷ

ԱՐԺ. Տ. ՎԱԶԳԷՆ

ՔՀՎ. ՊՈՂԱՃԵԱՆ

ՀՐԱԳՐԱՐԹ, 12 ՄԱՐՏ 2009

ԱՊԱՊՏԵԱՆ ԺԱՐ 11.00-ԻՆ

Ս. ՅԱԿՈՒՐ

ՔՐԻՍՏՈՒԵԱԿԱՆ ԴԵՍԻՄՈՒԿՈՒԹԵԱՆ

ՅԱՆԶԱԿՈՒՄԸ

ԿՐ ԱԵՐԿԱՅԾԱՆԷ

ԶԵԿՈՂՅ՝

ԱԶԳԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ

ՄԱՐԻՆ

ԶԵԿՈՒՅԱՐԵՐ՝

ԳՐԸ. Տ. ԽԱՅԱԿ Ս. ԱՐԵ. ՅԱԿՈՒՐԵԱՆ

ԱՊԱՅԱՆՈՂ ԳԱՆԱՏԱՅԻ ՀՎՈՅ ԹԵՄԱՆ

ՏԵԱԸՈՂՈՎԱԿԻ ՅՈՒՅԱԴՐՈՒԹԻՒՄ՝

ՎԵՅԱՄԵՎ ՏԵՊԵԿԱԳԻՐ

ԱԶԳ. ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

ԿՐՈՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ

ԵՐԵԿՈՂԵԱՆ 24 ՄԱՐՏ 2009-Ի ԺԱՐ 20.00-ԻՆ

ՄՈՒԹԵԱԼԻ ՀՎ ԿԵԴՐՈՆ

ԱՇԱՐՈՒԹԵԱՆ ԱՐԱՇ

**Մ ՈՒՐԲ Ձ ԱԿՈՒԲ**

**Առաջնորդանիւս Մայր Եկեղեցի**

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՐ՝  
**ԵԿԵՂԵՑՈՅ ԳՈՐԾԱԴՐ ՄԱՐՄԱՆ**  
ԵՒ  
**ՏՐԿԱԱՅ ՕԺԱՆՈՒԿ ՄԱՐՄԱՆ**

կը մատուցուի

**ՄԻՋԻՆՔԻ ԸՆԹՐԻՔ**

ԳԵՂԱՐՈՒԷԱՏԱԿԱՆ յԱՅՏԱԳԻՐ

**Չորեքշաբթի, 18 Մարտ 2008**

Երեկոյեան ժամը 8:00

**Մոնթրէալի Հայ Կեդրոն**

Տեղեր ապահովելու համար հաճեցէք հեռաձայնել  
Տիկ. Վիգի Զարգաւատճեանին՝ 514 979 9415,  
կամ Եկեղեցոյ դիւանատուն 514 331 5445 x202 թիւին,  
կամ՝ Կիրակի օրերը դիմել Տիկնանց Օժանդակ Մարմնին:

Մուտքի նուէր՝ 15\$